տություն, այլև հասարակական մի ամբողջ խավի հոգեբանական կերպավորում։ Հետագայում Ազաչանյանը դարձավ հոգեբանական դիմանկարի անվանի վարպետ, որի թողած ժառանգության մեջ հանդիպում ենք և՝ բանվորների, և՝ արհեստավորների, և՝ իր բնատանիքի անդամների հետաքրքիր գեղարվեստական բնութագրումների։

Անվանի նկարիչը առաջիններից էր, որ նկավ Սովետական Հայաստան՝ դառնալով նոր կուլտուրայի ակտիվ ստեղծողներից մեկը։ Այդ է սովետական շրջանում նրա ստեղծած դիմանկարների թեմատիկան. այստեղ արդեն տեսնում ենք ժամանակի մտավորականության կերպարները, կարմիր հրամանատարին, կոմերիտուհուն, փոքրիկ պիոներուհուն, ագրբեջանցի կին օգաչուին և, վերջապես, Սուրեն Ազատեղարյանի դիմանկարը։

Հոբելյանական օրերին Հայաստանի պետական պատկերասրահում բացվեց ակնավոր նկարչի ստեղծագործությունների ցուցահանդեսը, որը ամենամբողջականն էր մինչ այդ կազմակերպվածների մեջ։ Ցուցահանդեսը ի մի էր բերել նկարչի կատարած աշխատանքը մի քանի տասնամյակների ընթացքում։ Ցուցադրված էին ինչպես դիմանկարներ, այնպես էլ Ազաչանյանի բավականին հետաքրքիր բնանկարները։ Ցուցահանդեսի օրերին Երևանի Հայ-ֆիլհարմոնիայի փոքր դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր երեկո՝ նվիրված անվանի արվեստագետին։ Ստեփան Ազաչանյանին նվիրված բազմաթիվ հոդվածներ գեղեցկագրի ռեսպուբլիկայի թերթերն ու ամսագրերը։ Հայպետհրատարի հոբելյանի օրերին լույս ընծայեց արվեստի վաստակավոր գործիչ Ռ. Պարսամյանի աշխատությունը՝ նվիրված Ստեփան Ազաչանյանին։ Ստեփան Ազաչանյանի ծննդյան 100-ամյակը նշող հոբելյանական հանձնաժողովի որոշմամբ Հայաստանի գեղարվեստական և խրոնիկալ ֆիլմերի կինոստուդիան էկրան դուրս բերեց նկարչին նվիրված մի ֆիլմ։

Զորս տասնամյակ տևող իր ստեղծագործական կյանքի ընթացքում Ստեփան Ազաչանյանը, անցնելով կյանքի ու ժամանակի գժվարությունների միջով, բարձր է պահել ռեալիստական արվեստին անշահախնդիր ծառայելու իր վեհ գաղափարները, և այսօր նրա արվեստասերները արժանին են մատուցում վարպետ ստեղծագործողին։

Ա. Գևորգյան

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1963 ԹՎԱԿԱՆԻՆ

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գործունեության մեջ չափազանց կարևոր տեղ են գրավում հնագիտական արշավախմբերի դաշտային աշխատանքները։ 1963 թ. գործել են Կարմիր-բլուրի, Արիներդի, Տառնիի, Արմավիրի, Շենգավիթի, Լճաշենի, Ամբերդի հնագիտական արշավախմբերը, ինչպես և մեր ինստիտուտի ու Ադրբեջանական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի միացյալ վիմագրական արշավախումբը։ Նրանց աշխատանքների, ինչպես և մանր հետազոտությունների շնորհիվ հայտնաբերվել են տարբեր դարաշրջանների զգալի քանակությամբ նյութեր, հավաքվել են մեծ թվով վիմագիր արձանագրություններ, որոնք խոշոր նշանակություն ունեն հայ ժողովրդի անցյալի պատմության և մշակույթի ուսումնասիրության համար։

Ա. ԷՆԵԱԼԻԹՅԱՆ ԵՎ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Ա. Շենգավիթի պեղումները (25/10—20/12. ղեկավար՝ պատմ. գիտ. թեկնածու Ս. Սարգսյան)։ Շենգավիթի հնագիտական արշավախմբի ծրագրով նախատեսված էր պեղել Շենգավիթի հնագույն բնակատեղիի կենտրոնական մասի բնակարանները, պարսպի մի հատվածը և դամբարանները։ Պեղումների ընթացքում հայտնաբերվեց պարսպի մի հատվածը՝ աշտարակով և ստորերկրյա անցքի մուտքով, պարսպին կից բացվեցին իրար վրա գտնվող երկու կլոր կացարան և նրանց կից մի քանի քառանկյուն շենքեր։ Կլոր կացարանների կենտրոնում երևան եկան մի մեծ և մի փոքր կավե օջախ։ Քառանկյուն շենքում բացվեցին խոշոր հորեր՝ ցորենի ու գարու մնացորդներով, այլուրի ամբար։ Հայտնաբերվել է զգալի քանակությամբ Շենգավիթին բնորոշ խեցեղեն, ինչպես և բազմապես տեսակի բնատանիների ոսկորներ։ Պեղվեցին նաև մի քանի դամբարաններ, որոնք կողոպտված և ավերված են եղել դեռևս շատ հին ժամանակներում։

Բ. Լճաշենի պեղումները (15/6—30/7).— Լճաշենի արշավախմբի աշխատանքները (ղեկավար՝ պատմ. գիտ. թեկնածու Հ. Մնացականյան) կենտրոնացված են եղել երկու տեղամասում՝ ամրոցում և դամբարանադաշտում։ Ամրոցում, որը կանգնեցվել է շատ հին ժամանակներում և հարատևել է մինչև միջին դա-

բերը, պեղվել է վեց մեծ ու փոքր կացարան, որոնցում հայտնաբերված նյութերը թվագրվում են միջին դարերով (XI—XIII դդ.), իսկ ավելի խոր շերտերում գտնված նյութերը վերաբերում են մեծ մասամբ ուշ բրոնզի ժամանակաշրջանին։ Միջնադարին պատկանող նյութերը տնարակած և հասարակ կավամանների բեկորներ են՝ խորաքանդակ, կետազարդ եռանկյուններով և ցանցաձև զարդերով։ Միջնադարյան շերտի տակ բացվեցին մետաղաձուլական երկու հնոցի մնացորդներ։ Դրանցից մեկը շատ է ավերված, իսկ երկրորդ հնոցաձուլարանը շրջանաձև է, մաքր բարերով շարված, մեջը լցված մոխիր, որի մեջ գտնվեցին XII—X դդ. (մ. թ. ա.) պատկանող կավամանների մի քանի բեկորներ՝ գծավոր նախշազարդերով։ Բրոնզեդարյան դամբարանադաշտում կատարվող պեղումների ժամանակ հայտնաբերվեցին մեծ քանակությամբ կավամաններ, փայտե ամաններ, փայտե կապարճ՝ նետաղեղներով, որոնց փայտե կոթունների վրա ամրացված են օրսիդարարև նետասլաքներ։ Մի մեծ դամբարանում (կուրգան) բացվեց երկանիվ սայլ։ Այն սատիկ բայրայված է, թեև նրա պահպանված մասերը բերված են թանգարան։ Սայլի առեղներից աջ ու ձախ բացվեցին չորս մարդու, իսկ թափքի վրա՝ մեկ մարդու կմախքներ։ Ենթադրվում է, որ առեղների մոտ Սագվածները եղել են գերեզմանատիրոջ սուրուները և բոնի թաղվել են նրա հետ միևնույն դամբարանում։

Գ. Բրոնզեդարյան հուշարձանների մասը պեղումներ և հետախուզական աշխատանքներ.— Դաշտային հետախուզական աշխատանքների է գործուղվել սեկտորի կրտսեր գիտական աշխատակից Ս. Ա. Եսայանը, որը պեղել է 11 դամբարան Շամշադինի շրջանի Ղրզի գյուղի մոտ և մեկ կուրգան։ Հայտնաբերված է խեցեղեն, զարդարանքի առարկաներ և զենքեր։

1963 թ. մայիս ամսին դաշտային աշխատանքի գործուղված կրտսեր գիտական աշխատակից Լ. Բարսեղյանը հետախուզություն է կատարել Նոյեմբերյանի շրջանի Այրում, Ջուլֆան, Նոյեմբերյան գյուղերում։ Նոյեմբերյանում նա պեղել է մ. թ. ա. X—VIII դարերի 19 դամբարան։ Հետախուզական փոքրիկ ջոկատի կազմում նա եղել է նաև Դեղամա լեռներում, որտեղ հայտնաբերել են նոր վիշապաքարեր։

Սեկտորի կրտսեր գիտաշխատակից Գ. Միրզայանը եղել է Սևանի ու Հրազդանի շրջաններում՝ կիկլոպյան ամրոցների ուսումնասիրության կապակցությամբ։

Դ. Պետական պատմական թանգարանի արշավախումբը (Տելեմակ Խաչատրյանի ղեկավարությամբ) շարունակեց Արթիկի տուֆաշերտում փորված դամբարանների ուսումնասիրությունը։ Պեղվեցին բարի մեջ փորված և բարի խցանով ծածկված 4—5 դամբարաններ, որոնց մեջ հայտնաբերվեցին բրոնզեդարյան (XII—X դդ. մ. թ. ա.) բազմաթիվ և բազմապիսի կավանոթներ, ինչպես և բրոնզե իրեր՝ գենքեր, զարդեր։ 1963 թ. առաջին անգամ, բրոնզեդարյան կոմպլեքսներից բացի, Արթիկում հայտնաբերվեցին նաև երկաթի դարաշրջանի՝ մ. թ. ա. IX—VIII դարերի կոմպլեքսներ, որոնց մեջ գտնվեցին երկաթե նիզակի ծայր, դանակներ, խեցեղեն և այլ իրեր։

2. ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Ա. Կարմիր-բլուրի պեղումները (1/7—15/8) —Հայկական ՍՍՌ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Պետական էրմիտաժի (Լենինգրադ) միացյալ արշավախումբը (ղեկավար՝ ՀՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Բ. Բ. Պիոտրովսկի) 1963 թ. շարունակել է պեղումները Թեյշեբաինի բաղարի միջնաբերդի հարավ-արևելյան մասում, ուր պեղվել են մի քանի սենյակներ, որոնց մեջ հայտնաբերվել են զգալի թվով կավե անոթներ։ Հայտնաբերված են նաև բրոնզից և այլ մետաղներից պատրաստած փոքրաթիվ իրեր։ Վերին աստիճանի հետաքրքրական է բրոնզե մի պատվանդան, որի վրա պահպանվել է Արգիշտի I թագավորի արձանագրությունը, ըստ երևույթին ինչ-որ աստվածության արձանիկ էրեբունի բաղարի Եվրեբու մասին։

Բ. Ակիներեղի պեղումները (3/7—30/7).— Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Մոսկվայի Ա. Պուշկինի անվան կերպարվեստի թանգարանի միացյալ արշավախումբը (ղեկավար՝ ճարտարապետության թեկնածու Կ. Հովհաննիսյան) շարունակեց պեղումները պալատական շենքի հարավ-արևելյան մասում։ Այստեղ բացվում է նախորդ տարում եզրագծված մեծ դահլիճը, որը սակայն այս տարի նույնպես կիսով չափ մնաց անավարտ։ Դահլիճում հայտնաբերված է մեծ սյան խարիսխ, ուրարտական երկտող արձանագրությամբ՝ Արգիշտի I-ի կողմից կառուցվող շինության մասին։ Բացի խարսխից բացվել են որմնանկարների բազմաթիվ բեկորներ, որոնք կրկնում են նախկինում հայտնաբերված որմնանկարները։ Դահլիճի եզրագծի ուղղությամբ պեղված են 4 սենյակներ, որոնցից մեկն արհեստանոցի տպավորություն է թողնում։ Ակիներեղի պալատական շենքի պեղումները մոտենում են ավարտին։

մնում է 1—2 տարվա աշխատանք։ Հնում լրված այս ամրոցում պեղումների ընթացքում հայտնաբերված հնագիտական նյութը շատ սակավ է։

3. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ (ԱՆՏԻԿ ՇՐՋԱՆ) ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Ա. Դառնիի պեղումները (25/9—25/10).— Դառնիի հնագիտական արշավախումբը (ղեկավար պրոֆ. Բ. Ն. Առաքելյան) ծրագրի համաձայն պեղումներ կատարեց ամրոցի հրապարակում՝ հեթանոսական տաճարի, պալատական շենքի և բաղնիքի միջև։ Զուգընթացաբար շարունակվեցին արքայական հանդիսասրահի բացման աշխատանքները։ Ամրոցի կենտրոնական մասում պեղվեցին էնեոլիթյան բոլորակ կացարանն ու նրա հետ կապվող բնակելի կոմպլեքսը, շարունակվեցին ամրոցից դուրս գտնվող անտիկ դամբարանների որոնումներն ու նրանց պեղումները։

Դառնիի ամրոցի բոլորակ կացարանը ներսից մաքրելիս հայտնաբերվեցին ստվար մոխրաշերտ, հոր, էնեոլիթյան շրջանի խեցեղեն, բարձ և ոսկրե գործիքներ, օբսիդաբարերի բեկորներ։

Անտիկ շրջանի դամբարաններում հայտնաբերվել են ապակյա սրվակներ, կավե անոթներ, վաղ սասանյան մի դրամ, բրոնզե ապարանջաններ և ուլունքներ։

Պալատական հրապարակում գտնվեցին անտիկ խեցեղեն, շենքի բարձրորակ սվաղի բեկորներ, որոնք կազմված են մարած կրի և մանր ձեծած կղմինդրի խառնուրդից։ Սվաղի մի քանի բեկորներ պատած են կարմիր ներկով։ Արքայական երկհարկանի բնակելի շենքերի տակ գտնվեցին մարմարի բեկորներ և մարմարե մի քերի արձան (պահպանված է վզից մինչև ծնկների վերը)։ Գտնվեց նաև մարմարե պատվանդանի վերին մասը, որի վրա պահպանվում են արձանի ոտքերի քաթերը։ Արձանը պահպանված մասի բարձրությունը 50 սմ է, գոնաար (տունիկա) կրծքի վրա կազմում է ալեկոծաձև ծալքեր, իսկ գոտուց ներքև՝ ուղղաձիգ մոնումենտալ ծալքեր։ Գոտին անցնում է կոնքերի վրայով։ Մեջքի միայն աջ կեսն է լավ մշակված, իսկ ձախ կեսով նա հարել է կամ պատին՝ գրված լինելով խորշի մեջ, կամ մի այլ արձանի՝ կազմելով կոմպոզիցիոն բանդակների բաղկացուցիչ մասը։ Իր ոճով և արվեստով գտնված արձանը կարող է համարվել ուշ անտիկ շրջանի (II—III դդ.) գործ։ Թեև այս արձանը զուրկ չէ տեղական առանձնահատկություններից, սակայն նրա տեղում պատրաստված, քիչ գրսից բերված լինելու հարցը կպարզվի մանրակրկիտ ուսումնասիրությամբ։ Այժմ նշենք, որ անտիկ դարաշրջանի մարմարե արձան Հայաստանում գտնվում է առաջին անգամ, ուստի այդ գյուտը բացառիկ նշանակություն ունի։

III դարի արքայական հանդիսասրահը պեղելիս բացվեցին շենքի մույթերի տակի երկու սալաքարեր։ Աշխատանքների վերջին օրը հնագետներին վիճակվեց մի աշքի ընկնող գյուտ։ Պարզվեց, որ քարերից մեկի վրա փորագրված էր ուրարտական արձանագրություն, որը թողել է ուրարտական Արգիշտի թագավորը (VIII դ. առաջին կես մ. թ. ա.), այս վայրը նվաճելու և կերիներ տանելու մասին։ Այն փորագրված է «վիշապ» վրա, ուստի վիշապը լուծում է վիշապների ժամանակի վերաբերյալ գիտնականների վեճը։ «Վիշապները», այդ ձկնակերպ և բանդակազարդ հսկայական քարե կոթողները կերտվել են ավելի վաղ, քան հյուսիսում երևացել են ուրարտացիները։

Դառնիի արշավախմբի Հացավանի ջոկատը (ղեկավար՝ պատմ. գիտ. թեկնածու Դ. Տիրացյան) շարունակեց անտիկ շրջանի ամրոցի բացումը, ուր հայտնաբերվեցին երկու կոնտրֆորսներ և խեցեղենի բազմաթիվ նմուշներ, մետաղե իրեր, տեգի ծայր, ապակե անոթների բեկորներ։ Պեղվեցին հյուսիսային կիսաշրջան միջին աշտարակը, որտեղ գտնվեցին խեցեղենի բեկորներ և մի ամրողջական սափոր։

Դառնիի արշավախումբը Թեղադիր գյուղի հյուսիս-արևմտյան կողմում հայտնաբերեց նաև մի ամրոց՝ իր միջնաբերդով։ Ամրոցի հարավային մասում գտնվել են դամբարաններ տուֆ քարից պատրաստված սարկոֆագներով, որոնց մեջ եղել են պորֆիրիտից մի սկիհ և բրոնզե ապարանջաններ, որոնք վերաբերում են մ. թ. ա. VI—IV դարերին։

Բ. Արմավիրի պեղումները (1/10 30/11).— Արշավախումբը (ղեկավար՝ պրոֆ. Ռ. Ս. Առաքելյան) ծավալուն պեղումներ է կատարել Արմավիրի բլրի վրա և Դավթի սարում։ 1963 թ. աշխատանքները կենտրոնացված էին միջնաբերդի պարսպի և բլրի գագաթի շենքի բացման, միջնաբերդի ներսի տարածության, ինչպես նաև Մոխրաբլուր կոչվող վաղ բրոնզեդարյան հուշարձանի պեղման վրա։

Արմավիրի բլրի վրա բացվել է պարսպի մի մասը՝ 7 աշտարակներով։ Պարզվում է, որ բլրի վրա գտնվել է պարսպապատ միջնաբերդը, իր հզոր աշտարակներով։ Բլրի գագաթին, ամենաբարձրագիր կետում, եղել է մոնումենտալ մի շենք, գեղեցիկ ուրարտական շրջանից, որը հետագայում վերափոխվել է հելլենիստականի շարվածքի բարերն ունեն ծիծեռնակա-

պոչ կապեր), իսկ ավելի ուշ՝ ստացել միջնադարյան կառուցվածքի տեսք։

Միջնարերդում եղել են սրբատաշ քարից սյունազարդ շենքեր, որոնց բազմաթիվ բեկորները թափված են այդտեղ և բլրի ստորոտում գտնվող գերեզմանոցում։ Միջնարերդի հյուսիս-արևմտյան անկյունային աշտարակի կողքին հայտնաբերվեցին այրված հացահատիկի՝ ցորենի, գարու, կանեփի մնացորդներ, հելլենիստական և վաղ հայկական շրջանի կարմիր և դեղանակագույն գոտեզարդերով բազմաբնակ խեցեղեն, աղորիքներ, աղեղնաձև կտրիչով խոփ, երկաթի մեծ զանգվածներ և այլն։ Բացված մոխրաշերտը և գտնված երկաթե իրերը ենթադրել են տալիս, որ այդտեղ եղել է դարբնոց։ Հայտնաբերվել են նաև տեղի ծայր, քարե ոսրքեր, սանդերի բեկորներ, կենցաղային նշանակության այլ իրեր։ Առանձնապես աչքի է ընկնում ոսկե կրծքազարդը ընդելուզված քարերով, որը պատկանում է VI—IV դարերին մ. թ. ա.։

Տեղացիների պատմելով, բլրի հյուսիս-արևմտյան ստորոտում գտնվել են կարասային և սալարկղային թաղումներ, ապակե սրվակներ, ուլունքներ, բանդակազարդ ակերով մատանիներ, որոնցից մեկը արշավախմբին հանձնեց կոլտնտեսական Կարանմիշյան Կարապետը։

Արշավախմբի դիտողությունները ցույց են տալիս, որ Արմավիրը ավելի է ընդարձակվել հելլենիստական դարաշրջանում և փոված է եղել բլրի շուրջը, մանավանդ հարավ-արևմտյան ուղղությամբ։ Արմավիրի պեղումները առատ նյութեր են տալիս VI—I դարերի հայ մշակույթի, բաղաքային կյանքի, կենցաղի ու արվեստի վերաբերյալ և հնարավորություն կընձեռեն լրացնելու հայ մշակույթի պատմության մեջ մինչև այժմ գոյություն ունեցող ամենախոշոր բացը։

1963 թ. իր աշխատանքները ծավալեց Արմավիրի արշավախմբի Նոր Արմավիրի ջոկատը (ղեկավար՝ պատմ. գիտ. թեկնածու Հ. Ա. Մարտիրոսյան), Դավթի սարի բլրաշարքի և նրա շրջակայքում փոված ուրարտական քաղաքատեղիի և ամրոցի ուսումնասիրության գծով։ Պարզվում է, որ Նոր-Արմավիր, Մեծ և Փոքր Նալբանդյան գյուղերի միջև տարածված է եղել Արարատյան դաշտավայրի ուրարտական խոշոր քաղաքներից մեկը, որը գրավել է շատ բնդարձակ տարածություն և ունեցել է իր միջնարերդը։ 1963 թ. պեղումներով արշավախումբը բացել է մի ամբողջ շարք կացարաններ (ամրոցի հարավային պարսպապատի երկայնքով, կենտրոնական մասում և հյուսիսային պարսպի կենտրոնական գծի մոտ)։ Միջնարերդում բոլոր շինությունները, առանց բացառության, ունեն միջնադարյան շերտեր, երբեմն մինչև 4 շերտ, որոնք կարող են թվագրվել IX—XIV դարերով։ Հայտնաբերված իրերի մեջ կան կարասներ, կժեր, երկաթե իրեր, դրամներ, ջնարակած խեցեղենի բազմաթիվ նմուշներ և այլն։ Առանձնապես շատ են միջնադարյան թոնրատները։ Միջնադարյան կավակերտ տնակների կոնտուրները դծվում են ուրարտական մեծ շինությունների պատերի մեջ։ Այդ շինությունները վատ են պահպանված. նրանցում հաճախ հանդիպում են մանր բարերով ու կավե շաղախով շարված հորեր, փոքր չափի կարասներ և այլ առարկաներ։ Միջնադարյան շերտերի պեղումները, նյութական մշակույթի բազմապիսի մնացորդներով, օգնում են գաղափար կազմելու միջնադարյան մշակույթի և բնակչության կենցաղի վերաբերյալ։ Միջնարերդի խոր շերտերում պահպանվել են խիստ խախտված ուրարտական շերտերի մնացորդներ, ուրարտական կարասների մի մեծ մասան է բացված միջնարերդի հարավարևելյան անկյունում։

Ընդարձակ քաղաքատեղին, որտեղ դիտվում են տասնյակ շենքերի մնացորդներ, փողոցներ, թաղամասեր, ի տարբերություն ամրոցի, չունի միջնադարյան կամ վաղ հայկական շերտեր։ Այստեղ գրեթե լիովին պեղված է ուրարտական մի հարուստ առանձնատուն, որի միայն մասանում հայտնաբերված են 13 մեծ ու փոքր կարասներ, երկաթե մուրճեր, շատ ամանեղեն և այլ առարկաներ։

1963 թ. մեծ աշխատանք կատարվեց տեղագրական հանույթի ճշտման ուղղությամբ։ Զափագրվեց ամրոցն ամբողջությամբ և ամրոցից արևելք ընկնող 1 թաղամասի զգալի մասը։

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՎԵՐՄԱԴԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄԸ

Ա. Դվինի պեղումները (9/6—25/7, 14/9—25/10).—Դվինում պեղումները (ղեկավար՝ պրոֆ. Կ. Ղաֆադարյան) կատարվել են երկու հերթով, երեք տեղամասերում՝ Միջնարերդում, Սաորին բերդում և IV տեղամասում։ Շարունակվել են գահանիստ դահլիճի՝ 1962 թ. թերի մնացած պեղումները։ Այստեղ ի հայտ եկան փայտե սյուների խարիսխներ՝ 2,7 մ. շերտի տակ։ Խարիսխների գտնվելը, նրանց դասավորությունը նկատի ունենալով, պրոֆ. Ղաֆադարյանը գտնում է, որ այստեղ եղել է գլխատան տիպի կառուցվածք։ Նույն վայրում հայտնաբերվեցին միջակ մեծության կարասներ՝ ծածկված քարե խփերով, սնամեջ և ջնարակած պնակներ, կճուճներ և այլն։

Միջնաբերդի բերդապարսպի արտաքին երեսը պեղելիս գտնվեցին բազմաթիվ բնակելի շենքերի մնացորդներ. դրանք կառուցված են եղել X—XIII դարերում, իրենց մեջ ունեն ուղղահայաց դիրքով թաղված կարասներ, որոնց մեջ հավանաբար գինի են լցրել. այդտեղ ի հայտ եկան նաև կավե խողովակներ, ըստ երևույթին, կառուցված կեղտաջրի հեռացման նպատակով։ Այդ շենքերը հետագայում ենթարկվել են զանազան ձևափոխությունների։

Արշավախմբի հիմնական ուժերը կենտրոնացված էին հելլենոսական կոատան շրջապատը պեղելու վրա, կոատան և նրան հարակից քառակուսիների մեջ բացված առարկաների ժամանակը որոշելու նպատակով։ Պրոֆ. Ղաֆադարյանը ենթադրում է, որ այն կառուցված պետք է լիներ VI—III դարերում (մ. թ. ա.), թեև չի բացառվում ավելի վաղ ժամանակների պատկանելը։ Այստեղ հայտնաբերվեցին ձիու սանձի բրոնզե մասեր՝ դաշույնների, ճանկավոր նետասլաքների, կապարճի, սրերի և երկաթե ու բրոնզե իրերի հետ միասին։ Գտնվեցին նաև մետաղի հալոցներ քարից և կավից, ձույլ բրոնզ, պղնձի զանգված, ուլունքներ, ձուլելու բարձ կաղապար։ Պարզվում է, որ այստեղ եղել է մետաղագործի արհեստանոց։ Նման արհեստանոցի գոյությունը մեզ մոտ եզակի է, որովհետև նրանում պարունակված նյութերը մեզ ծանոթ էին միայն դամբարաններից։

Միջնաբերդի վերին շերտերում բացվել է մի բնակարան, որը վերաբերում է IX—XIII դարերին։

Ստորին բերդում 1963 թ. շարունակվեցին բերդապարսպի անկյունային մեծ բուրգի պեղումները։ Պարզվեց, որ 38 մ. պարագիծ ունեցող մեծ բուրգը անկյունային է, իսկ նրա կողքի շարքային բուրգը. ծավալով անհամեմատ փոքր է։ 1963 թ. պեղվել է անկյունային բուրգի հյուսիսային կողքի պատը և շարքային փոքր բուրգը՝ մինչև հաջորդ բուրգի սկիզբը։

Չորրորդ տեղամասում արշավախումբը պեղել է մոտ 50 մետր մակերես և բաց է արել քարակերտ հսկայական մի շենքի (ըստ պրոֆ. Ղաֆադարյանի՝ իշխանատան) ներքին մասերը, ուր գտնվել են դիպսե ձուլածո առարկաների մի քանի բեկորներ։

Պեղումների ընթացքում դուրս են եկել տարբեր ժամանակների պատկանող մոտ 300 թանդարանային առարկաներ՝ գունազարդ մեծ կարասի բեկորներ, հախճապակե, քարե, ապակե, դիպսե իրեր, ինչպես նաև մետաղե 54 առարկաներ։ Գտնվել են նաև 15 հին դրամներ։ Իրենց չանակով աչքի են ընկնում խեցանոթների բեկորները, կավե խուփերը, աղորիքները, քարե առարկաները (սանդեր, աղորիքներ, սրբարներ և այլն)։

Բ. Ամբերդի պեղումները (30/8—30/9).— Ամբերդում պեղումներ կատարել է ճարտարապետության դոկտոր Ն. Տոկարսկին, կրտսեր գիտական աշխատակից Ս. Հարությունյանի հետ միասին։ Պեղումները պարզել են, որ Ամբերդը Կամսարականների տիրապետության շրջանում գոյություն չի ունեցել և այնտեղ VII դարի եկեղեցի չկա։ Ամբերդը հիմնադրել են Պահլավունիները, նա իր ծաղկման շրջանն է ապրել X—XI դարերում և Զաքարյան իշխանների օրոք, 1200 թ. հետո, երբ նրանք մեծ և մանր ճակատամարտերով ամրոցը ետ խլեցին սելջուկներից և Արագածոտնի գործակալ կարգեցին Վաչուտյաններին։ Մոնղոլական արշավանքները հողով ու մոխրով ծածկեցին Ամբերդը, որն այդ ժամանակվանից ավերակ վիճակում է գտնվում։

Գ. Էպիգրաֆիկ արշավախումբը (27/7—12/9).—Ճարտարագիտության և ազգագրության ինստիտուտի և Ադրբեջանական ՍՍՌ պատմության ինստիտուտի միացյալ վիմագրական արշավախումբը (արշավախմբի պետ պատմ. գիտ. թեկնածու Ս. Բարխուդարյան, պետի տեղակալ՝ պատմ. գիտ. թեկնածու Մ. Գուլիևա) 1963 թ. դաշտային աշխատանքներ է կատարել Ադրբեջանի և Հայաստանի շրջաններում։ Ծրագրվածին համապատասխան, գիտարշավն ուսումնասիրեց Կուր գետի աջափնյա շրջանները. այն է՝ Խանլարի, Շամխորի, Գետաբեկի. Նոյեմբերյանի ու Կրասնոսելսկի շրջանները։ Գիտարշավի ընթացքում «Դիվանի» համար մշակված մեթոդներով հավաքվել և ուսումնասիրվել են 265 հայերեն և երկու տասնյակից ավելի արաբատառ արձանագրություններ։ Հավաքված հայերեն արձանագրությունները վերաբերում են IX—XVII դդ. և կարևոր նյութեր են պարունակում այդ դարաշրջանի սոցիալ-տնտեսական պատմության, տեղագրության. իշխանական տների տոհմածառերի և նրանց տիրույթների սահմանների վերաբերյալ։ Այդ արձանագրությունները կարևոր փաստեր են պարունակում ժողովուրդների տեղաշարժման. համատեղ կյանքի ու շինարարության և նրանց փոխհարաբերությունների մասին։ Արձանագրությունների 70 տոկոսը մինչև այժմ էլ չի հրատարակված։ Գիտարշավի ընթացքում ավագ գիտաշխատող Գ. Կարախանյանը հավաքել է բավական թվով կենցաղային քանդակներ և կատարել է հնավայրերի լուսանկարահանումներ։ Գիտարշավը հայտնաբերել է մի շարք մինչև այժմ անհայտ հուշարձաններ, որոնցից ամենակարևորը Հին Գետիկ վանքի մնացորդ-

ներն են։ Հավաքված արձանագրությունները լենինգրադյան հայ վիմագիր արձանագրությունների դիվանի համապատասխան պրակի մեջ։

Պրոֆ. Կ. Ղաֆադարյանը մի ամսով գործուղվել է Հաղարծին՝ վանքի վիմագիր արձանագրությունները ուսումնասիրելու նպատակով։ Այդ ժամանակամիջոցում նա հուշարձանների վրայից ընդօրինակել է շուրջ 100 արձանագրություն։

1963 թ. պեղումները, ինչպես տեսնում ենք, ավելի քան արդյունավետ են եղել։ Հայտնաբերված հուշարձանները, հնագիտական հարուստ նյութերը և հավաքված վիմագիր արձանագրությունները խոշոր արժեք են ներկայացնում հայ ժողովրդի դարավոր պատմության, մշակույթի և արվեստի ուսումնասիրության, ինչպես և հարևան ժողովուրդների հետ նրա պատմական ու մշակութային կապերը լուսաբանելու համար։

Պրոֆ. Բ. Առաքելյան
Հայկական ՍՍՌ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի դիրեկտոր

ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ ՌՈՒՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայագիտության բնագավառում ծավալվող աշխատանքների մեջ յուրը ներդրում է հին և միջնադարյան իմաստասիրական երկերի գիտական համահավաք-համեմատական բնագրերի կազմումն ու հրատարակումը՝ ռուսերեն զուգահեռ թարգմանությամբ։

Հայ իմաստասիրական երկերի ռուսերեն թարգմանությունը բավականին լայն ծավալ առացավ մեզ մոտ ռուսական տարիներին։ Մինչև այժմ ռուսերեն են թարգմանվել տարբեր ծավալի ինը աշխատություն. ա) «Հերմաս Եռամեծի առ Ասկղեպիոս Սահմանք», բ) «Զենոնի իմաստասիրի Յոպագս բնութեանց», գ) «Յովհաննու Որոտնեցւոյ հաւաքեալ ի բանից իմաստասիրաց» երկերը հրատարակված են Մատենադարանի «Բանբեր»-ի N 3-ում (1956), դ) «Ճարտասան, յոգագս բնութեան» և ե) «Սահմանք փիլիսոփայականք» երկերը՝ Մատենադարանի «Բանբեր»-ի N 5-ում (1960), իսկ առանձին գրքերով՝ զ) «Յովհաննու Որոտնեցւոյ Վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտելի» և է) «Յովհաննու Որոտնեցւոյ համառօտ վերլուծութիւն Պորփիրի դժուարաւուժիցն» (երկուսը մի գրքում, 1956), բ) Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» (1960) և թ) «Մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտելի» (1961)։

Թարգմանված բնագրերի ստվար մեծամասնությունը արդյունք է Հունարան դպրոցի գործունեության։ Հետևաբար լինելով թարգմանական աշխատանքների, մեր երկրորդ թարգմանիչները բախվում էին յուրը դժվարության. դասական հայերենը, որը հիանալի դերպով ձևավորում էր գեղեցիկ գրականության մեջ արտահայտված ամենաբազմերանգ մտքերն ու զգացմունքները, բավականին անզոր դուրս եկավ գիտական-իմաստասիրական երկեր հորինելու կամ թարգմանելու համար։ և դա բացատրվում է ոչ թե կառուցվածքային ներքին հնարավորությունների անզարգացածությամբ կամ անճկունությամբ, այլ հիմնականում համապատասխան գիտությունների համար պահանջվող տերմինաբանության ու մասնագիտական սեղմ ու կուռ, ճշգրիտ հասկացությունների ու արտահայտությունների բացակայության հանգամանքով։ Եվ դա, անտարակույս, հասկանալի է առաջին անգամ գրի առնվող մատենագրության համար։ Կասկածից վեր է նաև, որ գիտական-իմաստասիրական երկերի հայերեն թարգմանության վրա ուժեղ գրոշմ է դրել Ալեքսանդրյան դպրոցի մշակած թարգմանական սկզբունքը, բուն որի, հնարավոր աղավաղումներից ու թյուրըմբռնումներից խուսափելու համար, պահանջվում էր բառացի նյութական թարգմանություն, հնան մոտեցումը հանգեցնում էր թարգմանության կառարող լեզվի կառուցվածքային-շարահյուսական օրինաչափությունների բացահայտ հպատակեցմանը թարգմանվող լեզվին։ Այդպես ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ թեև մեր առաջին թարգմանիչները նույնքան շատ թարգմանություններ կատարեցին հունարենից և ասորերենից, բայց հավատարիմ մնացին հայոց լեզվի օրինաչափություններին ու ոգուն, մինչդեռ երկրորդ թարգմանիչների լեզուն հիմնովին և տրամագծորեն հակառակ էր հայոց լեզվի բուն օրինաչափություններին ու խորթ՝ նրա ոգուն։ Ոչ միայն իրենց նորաստեղծ բառաբարդումների կազմությունը երկրորդ թարգմանիչները լիովին համապատասխանեցրին հունարենի բառաբարդման կանոններին՝ նախադասությունների հարուստ համակարգով, այլև շարահյուսու-